



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՉԻՆԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Քաղաքակրթությունն սկզբնական շրջանում սահմանվում էր որպես բարբարոսությանը հաջորդած հասարակական զարգացման փուլ (Մորգան, Էնգելս) [1]: Ըստ այդմ, այն հասարակական և քաղաքական կացություն է, որը մարդկային հասարակության զարգացման բարձր մակարդակով տարբերվում է նախնադարյան վիճակից:

Քաղաքակրթությունը բնորոշում է հասարակության զարգացման մակարդակը: Այն բնութագրվում է սոցիալական համակարգով, պետության ձևավորմամբ, դասակարգերի և մասնավոր սեփականության առաջացմամբ: Ներկա փուլում այն դարձել է մարդկային հասարակության ինքնաճանաչման, բնության, հասարակության, մշակույթի հետ ունեցած կապի և փոխհարաբերակցության կարևոր արժեհամակարգ: Այսօր արդի քաղաքակրթության աստիճանը բնորոշվում է առավել զարգացած երկրների մակարդակով: Այլ կերպ ասած, զարգացվածության աստիճանն է որոշում, թե այս կամ այն երկիրը կամ ազգը քաղաքակիրթ է, թե ոչ: Բնականաբար նման կարծիքը միանշանակ ընդունել չի կարելի, քանի որ աշխարհում կան ազգեր, որոնք ունեն քաղաքակրթական հարուստ անցյալ, սակայն չկարողանալով արդիականալ և կերպափոխվել ժամանակին համապատասխան՝ համարվում են ոչ զարգացած կամ զարգացող:

«Քաղաքակրթություն» եզրն առաջացել է լատիներեն «civilis» բառից, որը նշանակում է քաղաքացի, քաղաքացիական, պետական: Եզրույթը դեռևս անտիկ ժամանակներում գործածվել է ի հակադրություն բարբարոսության, իսկ որպես ինքնուրույն հասկացություն օգտագործվել է «մշակույթ» եզրի պրիզմայով՝ 18-րդ դարում մտնելով գիտական բառապաշար: Առաջին անգամ «քաղաքակրթություն» եզրը գործածել է Վիկտոր դե Միրաբոն իր «Օրենքի բարեկամ» աշխատության մեջ՝ սահմանելով այն որպես բարքերի մեղմացում, նրբանկատություն, քաղաքավարություն և գիտելիքներ, որոնք տարածվում են պարկեշտության կանոնները պահպանելու նպատակով, որպեսզի կատարեն համակեցության կանոնների դերը [2]:

«Քաղաքակրթություն» հասկացությունը բազմաբնույթ երևույթ է: Ընդհանուր առմամբ, այն կարելի է դիտարկել մի քանի իմաստներով: Նախ, այն կապվում է ավանդական մշակութափոխակապական խնդիրների հետ: Այս իմաստով շեշտը դրվում է մշակույթի կենդանի օրգանիզմի և քաղաքակրթության մեռյալ տեխնիցիզմի հակադրության վրա: Երկրորդ իմաստով դիտարկվում է բաժանվածությունից միասնություն տանող աշխարհի զարգացումը, մեկ այլ իմաստով՝ մատնանշվում առանձին,

մեկուսի քաղաքակրթությունների պլյուրալիզմը: Այս դեպքում համամարդկային հեռանկարի մասին տեսակետը վերանայվում է:

Կան բազմաթիվ հեղինակներ, ովքեր այս կամ այն կերպ մեկնաբանել են քաղաքակրթություն եզրույթը, սակայն կան մի շարք դպրոցներ, որոնք համակարգված մոտեցում են ցուցաբերել: Ուստի, առավել լավ ըմբռնելու համար անդրադառնանք նաև դրանց:

Սոցիալ-պատմական դպրոց: Այս դպրոցն ունի ավելի հին, «դասական» ավանդույթներ, որոնք գալիս են դեռևս Կանտից և Հեգելից: Սոցիալ-պատմական դպրոցի առանձնահատկությունն այն է, որ քաղաքակրթությունը դիտարկում է մշակույթի հարաբերակցությամբ, իսկ, հեղինակներն անդրադառնում են, այսպես կոչված, քաղաքակրթական մշակույթների պարբերացմանը և տիպաբանությանը: Այս դպրոցի ներկայացուցիչներից են Օ. Շպենգլերը, Ա. Թոյնբին, Ն. Դանիլևսկին:

Դիտարկելով քաղաքակրթություն հասկացությունը՝ Օսվալդ Շպենգլերը նշում է. *«Յուրաքանչյուր մշակույթ ունի սեփական քաղաքակրթությունը: Այն մշակույթի անխուսափելի ճակատագիրն է: Քաղաքակրթություններն արտաքին և արհեստական վիճակներն են, որոնց ընդունակ է զարգացած մարդկության տեսակը»* [3]: Քաղաքակրթությունը որոշակի մեծ դարաշրջանների շարք է, որը խիստ սահմաններում պահպանում է սեփական գոյությունը:

Առնուլդ Թոյնբին ընդունում էր *«քաղաքակրթության ծագումը՝ որպես արարչության մի գործողություն, որն ընդգրկում է փոփոխության գործընթացը ժամանակի մեջ»*, և *«մշակութային տարրերը որպես քաղաքակրթության էություն»* [4]: Քաղաքակրթությունները պատասխանում են որոշակի մարտահրավերների, այնուհետև անցնում ծաղկման շրջան, որը ուղեկցվում է ստեղծագործ փոքրամասնության կողմից ստեղծված շրջակա միջավայրի նկատմամբ վերահսկողության ավելացմամբ: Աճին հետևում է դժվարությունների ժամանակաշրջանը՝ համընդհանուր պետության առաջացումը, իսկ որոշ ժամանակ անց՝ մասնատումը:

Իր հերթին Ն. Դանիլևսկին առաջ է քաշում մշակութապատմական տիպերի տեսությունը: Ըստ նրա՝ մշակութապատմական տիպն օրգանական միավորում է, որի էվոլյուցիան բաղկացած է ծնունդ-ծերություն-մահ շղթայից: Միաժամանակ, մշակութային էվոլյուցիան էթնիկական վիճակից անցում է կատարում պետական, քաղաքակրթական վիճակի [5]: Քաղաքակրթությունը ստեղծվում և վերարտադրվում է մարդկանց կողմից և հանուն ժողովրդի: Հետևաբար, դրա առավել համապատասխան հատկանիշներն այն մարդիկ են, ովքեր արտահայտում են քաղաքակրթության մարդկային չափումը:

Ռասայական-մարդաբանական դպրոց: Այս դպրոցի հիմնական նպատակն է ցույց տալ, որ ռասայական գործոնը վճռական ազդեցություն ունի քաղաքակրթությունների մշակութային և պատմական զարգացման վրա: Մարդկանց վարքագիծը պայմանավորված է իրենց կենսաբանական ծագմամբ, քաղաքակրթությունները զարգանում են ռասայական հիմքերով, իսկ քաղաքակրթության մեջ ցեղերի

խառնումը նրա անկման և մահվան պատճառ է դառնում: Այս դպրոցի ներկայացուցիչներն են Ժոզեֆ Գոբինոն, Լյուդվիգ Վոլտմանը, Ժորժ Լապուսը:

Մասնավորապես Լ. Վոլտմանը նշում է, որ նույնիսկ գերմանացիները, ովքեր իրենց համարում էին արիացիներ, մասամբ են պահպանել արյան մաքրությունը, ինչն էլ հեռացրել է նրանց սեփական քաղաքակրթությունից [6]:

Սոցիոլոգիական դպրոց: Այս դպրոցի ուսումնասիրության առարկան հենց հասարակությունն է իր կառուցվածքով և սոցիալական ինստիտուտներով: Ելակետային գաղափարն այն է, որ մշակույթը սոցիալական արտադրանք է: Հիմնական ներկայացուցիչներն են Թ. Էլիոթը, Պ. Սորոկինը, Ա. Վեբերը: Նրանց գաղափարները հիմնականում կապված են մշակույթի տեսությունների հետ:

Պ. Սորոկինը մշակութային համակարգը դիտարկում է խորհրդանիշներ-արժեքներ-նորմեր կառուցվածքի շրջանակներում, ընդ որում, մշակութային համակարգերը կարող են գրեթե չօգտագործվել: Բայց նրանց մեջ կան հինգ կարևորագույնները՝ լեզուն, գիտությունը, կրոնը, արվեստը և էթիկան: Դրանց համադրությունը որոշակի ինտեգրված կազմաձևում ձևավորում է սուպերհամակարգեր, որոնցից առանձնացվում են երեքը՝ գաղափարախոսական, զգայական և իդեալիստական: Դրանց տատանումները կազմում են պատմության բովանդակությունը [7]:

Ա. Վեբերը և Ֆ. Թենիսը կարծում են, որ «քաղաքակրթություն» նշանակում է միայն տեխնիկական և գործնական գիտելիքների միասնություն, բնության վրա ազդեցության գործիքներ: Իսկ «մշակույթն» ընդհակառակը, նորմատիվ սկզբունքների ամբողջություն է՝ արժեքներ, իդեալներ, կամ այլ կերպ ասած՝ մտածողություն (ոգի) [8]:

Սիմվոլիկ դպրոց: Քաղաքակրթական բոլոր գործընթացները պետք է դիտարկել որպես հաղորդակցական գործընթացներ: Քաղաքակրթության ամենակարևոր բաղադրիչը՝ մշակույթը, դիտարկվում է որպես խորհրդանիշների համակարգ, որից ձևավորում է քաղաքակրթական կողը և որի միջոցով փոխանցվում է տեղեկատվությունը: Այս դպրոցի ներկայացուցիչներն են Ֆ. դե Սոսյուրը, Է. Կասիերը, Կ. Լևի-Սթրոսը:

Կ. Լևի-Սթրոսը, խոսելով մշակութային բազմազանության մասին, նշում է, որ մարդկային մշակույթների բազմազանության հասկացությունը չպետք է ընկալվի ստատիկ կերպով: Սա նմուշների բազմազանությունն է: Անկասկած, մարդիկ տարբեր մշակույթներ են ստեղծել աշխարհագրական հեռավորության, շրջակա միջավայրի առանձնահատկությունների և մարդկության մնացած հաստվածը չճանաչելու շնորհիվ [9]:

Էկոլոգիական դպրոց: 20-րդ դարի վերջին քաղաքակրթությունների ուսումնասիրման ոլորտում սկսվեց կարևորվել էկոլոգիական գործոնը: Ջերմաստիճանի, աշխարհագրության փոփոխությունները հանգեցրին քաղաքակրթական մշակույթի փոփոխմանը: Միևնույն ժամանակ, մահացած քաղաքակրթությունների որոշ հատ-

կանիշներ ընդունել են հաջորդող մշակույթները: Նման գործընթացը կոչվում է «քաղաքակրթականացում» (ցիվիլիզացիում): Այն վերաբերում է քաղաքակրթությունների շարունակականությանը, որոնք առաջանում են նույն տարածքում, գաղափարական և էկոլոգիական միևնույն պայմաններում:

Ինտեգրալիզմ: Այս ուղղության համաձայն՝ մարդկության քաղաքակրթությունը սկիզբ է առնում նեոլիթյան շրջանից, իսկ պատմական գործընթացի ռիթմն արտահայտվում է պատմական գիտությունների, համաշխարհային և տեղային քաղաքակրթությունների սերունդների սոցիալ-մշակութային համակարգի պարբերական փոփոխություններով: Այս պարբերացման հիմքում ընկած են սոցիոգենային օրենքները՝ ժառանգականությունը, փոփոխականությունը և ընտրությունը:

Ցանկացած քաղաքակրթություն ունի իրեն բնորոշ կառուցվածքը, սակայն կան կառուցվածքային տարրեր, որոնք ընդհանուր են բոլորի համար՝

- **հոգևոր բնագավառ.** այն ձևավորում և սերընդեսերունդ փոխանցում է քաղաքակրթական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են գիտությունը, մշակույթը, կրթությունը, էթիկան և կրոնը: Կարևորն է այն հանգամանքը, որ սրանք տարբերվում են քաղաքակրթությունից քաղաքակրթություն:

- **Սոցիալական բնագավառ.** ներառում է տնտեսական միավորումները և մարդկանց խմբավորումները, էթնոսը, քաղաքականությունը, պետական պատկանելությունը: Այս համակարգը պարբերաբար փոփոխությունների է ենթարկվում պատերազմների և հեղափոխությունների արդյունքում:

- **Տնտեսական բնագավառ.** այն ներառում է սեփականության ձևերը, բաշխման եղանակները, փոխանակման ձևերը, տնտեսության կառուցվածքը, տնտեսական կառավարման ձևերը:

- **Տեխնոլոգիաներ.** սրանք աշխատանքի միջոցներ են, էներգիայի աղբյուրներ, տեխնոլոգիաներ, աշխատանքի բաժանում, արտադրության կազմակերպման ձևեր:

- **Ազգ, ժողովուրդ.** քաղաքակրթական կառուցվածքի հիմքը բնակչությունը, բնությունը և էկոլոգիան, քաղաքակրթության տարածքը, կլիմայական պայմանները, բնակչության խտությունն ու ռեսուրսներն են:

Բացի վերոնշյալներից կարևոր են նաև պետության էլիտան՝ որպես կենսակերպ և վարվելակերպ սահմանող ու վերիմաստավորող հասարակական շերտ, արվեստը՝ որպես հանրության պատմական հիշողության պահպանման և փոխանցման ձև, եկեղեցին՝ որպես կենսական ուղենիշների, աշխարհի հոգևոր անաղարտ նկարագրի և բարոյականության չափանիշների ժառանգականությունն ապահովող սոցիալական ինստիտուտ:

Կան բազմաթիվ հատկանիշներ, որոնք առանձնացնում են քաղաքակրթությունը մարդկային կյանքի այլ ձևերից: Մենք առանձնացնում ենք դրանցից մի քանիսը.

Ադապտացիա. քաղաքակրթության գեներատորները պետք է բնավորության ծայրահեղ ճկունություն ունենան, նոր միջավայրում հարմարվելու ունակություն և համբերություն: Այդ հնարավորություններն անհրաժեշտ են ոչ զարգացած տնտեսությամբ

յունից մինչև ժամանակակից տնտեսության զարգացման, անցյալի ավանդույթների խաթարված կյանքի ձևից մինչև ժամանակակից վերափոխումների, ցեղային կազմակերպություն ունեցող հասարակությունից՝ արդիականացված և արդյունաբերականացված հասարակության անցում կատարելու համար: Ամեն ինչ պետք է նորացվի և թարմացվի, նույնիսկ մտածելակերպը:

Աղեկվատություն. անցյալում քաղաքակրթությունների առաջացումը բացարձակ անհրաժեշտություն չէր: Մարդկային ոչ բոլոր միավորումներն են կարողացել ստեղծել կամ պահպանել քաղաքակրթություն: Դա կարող էին միայն այն մշակույթները, որոնք աղեկվատ էին շրջակա միջավայրի նկատմամբ:

Իշխանություն. քաղաքակրթությունը կապված է կենտրոնացված պետության և ուժեղ պետական իշխանության պահպանման հետ, որը մեծ ազդեցություն ունի քաղաքակրթության գաղափարախոսության և մշակույթի վրա:

Սահմաններ. Հանթինգթոնը նշում է, որ քաղաքակրթությունները չունեն հստակ սահմաններ, ճշգրիտ սկիզբ և ավարտ: Մարդիկ կարող են վերանայել իրենց ինքնությունը՝ արդյունքում ժամանակի ընթացքում փոխելով քաղաքակրթության կառուցվածքը: Մարդկանց մշակույթները փոխազդում են միմյանց հետ: Նրանց նմանության աստիճանը և տարբերությունները նույնպես փոխվում են [10]:

Գոյության տևողություն. Հանթինգթոնի խոսքերով՝ քաղաքակրթությունների եզակի և յուրահատուկ էությունը պայմանավորված է պատմական երկարատև շարունակականությամբ: Իրականում քաղաքակրթությունները պատմության մեջ ամենաերկարակյացն են: Կայսրությունները վերելքներ և անկումներ են ապրում, կառավարությունները գալիս և գնում են, քաղաքակրթությունները շարունակում են ապրել՝ ենթարկվելով քաղաքական, սոցիալական, տնտեսական և նույնիսկ գաղափարական փոփոխությունների:

Աստիճանակարգություն. քաղաքակրթությունները ենթադրում են հիերարխիա, որը ներառում է լեզուն, դիցաբանությունը, իշխանությունը և այլն:

Չինական քաղաքակրթությունն այն եզակիներից է, որն անցել է պատմական երկար ճանապարհ, բայց պահպանելով իր հիմնական գծերը, չի ոչնչացել. ենթարկվել է տրանսֆորմացիայի և արդիականացել՝ հետևելով ժամանակի թելադրանքին: Ներկայիս Չինաստանի զարգացման հիմքում ընկած են քաղաքակրթական և արժեհամակարգային առանձնահատկություններ, որոնք մի կողմից թույլ են տալիս տարբերվել այլ երկրներից և քաղաքակրթություններից, մյուս կողմից՝ քայլել համաշխարհայնացման ժամանակակից ալիքին համընթաց:

Չինական քաղաքակրթությունը, ինչպես արևելյան հնագույն մյուս քաղաքակրթությունները, առաջացել են խոշոր գետերի ափերին. այսինքն այն վայրերում, որտեղ բնական պայմանները հնարավորություն են ընձեռել մեծ թվով մարդկանց կերակրել: Չինաստանը, անցնելով կայսրեական բազմաթիվ գերդաստանների հերթափոխության, պատերազմների և պառակտումների միջով, այսօր աշխարհին ներկայացնում է զարգացման սեփական մոդելը: Չխորանալով պատմական ժամա-

նակագրության և փաստագրության մեջ, անդրադառնանք չինական քաղաքակրթության արժեքահամակարգային առանձնահատկություններին՝ հաշվի առնելով վերոնշյալ հատկանիշները:

Չինական քաղաքակրթությունը և մշակույթը կարող ենք համեմատել այսբերգի հետ, որի ստորին մասը գտնվում է ջրի տակ և տեսանելի չէ Արևմուտքին, որը տեսնում և ընկալում է միայն այսբերգի գագաթը: Այն մասը, որը գտնվում է ջրի տակ, ներառում է չինական փիլիսոփայությունն ու հնագույն ավանդույթները, իսկ գագաթը Չինաստանի ներկայիս զարգացումն է: «Այսբերգի գագաթը» բնական երևույթ է, որը նախաձեռնել է չինական ղեկավարությունը: Միաժամանակ գոյություն ունի ամերիկյան «այսբերգ»՝ արևմտյան չափանիշներին և արժեքներին համապատասխան, որն ուղղվում է չինականի դեմ: Փաստորեն, այստեղ տեղին է անդրադառնալ Ս. Հանթինգթոնին, ով անընդհատ խոսում էր ԱՄՆ-ի և Չինաստանի քաղաքակրթական «բախման» մասին [11]: Վերլուծելով Հանդիգթոնի այս միտքը՝ կարող ենք հետևություն կատարել. «համաշխարհային օվկիանոսում» արևմտյան և չինական սառցաբեկորները կարող են բախվել, որը կարող է կործանարար լինել երկուսի համար էլ, սակայն կարծում ենք, որ սառցաբեկորները կարող են նաև շրջանցել միմյանց:

Եվրասիական մայրցամաքում առաջացած բոլոր քաղաքակրթությունների թվում միայն չինականն է մշտապես գտնվել նույն տարածքում: Այդպիսով, ի տարբերություն մյուս քաղաքակրթությունների, Չինաստանը չի ձևավորվել նվաճումների կամ գաղթի արդյունքում:

Չինական մշակույթը ձևավորել է գրեթե միակ համակարգը, որն աշխատում է գաղափարների ու իրավիճակների ներկայացման, և ոչ թե ձայների հիման վրա, ինչը բնորոշ է եվրասիական մայրցամաքի գրային մյուս բոլոր համակարգերին: Դա իր հերթին հիմք է ծառայում եզակի տիրույթի համար, որի վառ օրինակն է այն փաստը, որ չինացիները 3000 տարվա ընթացքում չեն փոխել քաղաքական համակարգը: Մեզ արդեն հայտնի մերիտոկրատիայի սկզբունքը, ըստ որի՝ ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ անձինք՝ անկախ սոցիալական ծագումից ու ֆինանսական ունեցվածքից, յուրաքանչյուր չինացու հնարավորություն է տվել մասնակցել կառավարման գործընթացներին: Այդպիսի համակարգը լավագույն ուղեղներին անփոփոխ առաջարկել է ծառայություն՝ ի տարբերություն ֆրանսիական ավատատիրության, որի շրջանակներում հասարակական աստիճանով կարող էին բարձրանալ միայն օրդեններով: Հետագայում՝ բուրժուազիայի վերելքով պայմանավորված, մարդիկ սկսեցին հասկանալ կրթության կարևորությունը: Չինացիների համար երկարատևությունն արդյունավետության հոմանիշ է: Նրանք չեն հասկանում, թե ինչու իրենք պետք է փոխեն համակարգը, երբ այն այդքան երկար ժամանակ լավ է աշխատում:

Այնուամենայնիվ, մշակութային դիսկուրսի ետևում թաքնված է քաղաքականը: Խոսքը գնում է ժամանակակից չինական քաղաքակրթության գաղափարախոսական կողմնորոշման մասին: Չինական սոցիալիզմը նորարարություն էր, որով բացվեց

Չինաստանի արդիականացման ճանապարհը: Համադրելով սոցիալիզմը հաղորդակցման համակարգերի հետ՝ ցանցային տարբեր կառույցների, շուկայական հարաբերությունների և փակ հասարակության միջոցով այս երկիրը լուրջ մարտահրավեր է նետում ամբողջ աշխարհին:

Հաջորդ առանձնահատկությունը միասնական կրոնի բացակայությունն է: Նրանք դառնում են դաոիստ, օրինակ՝ որևէ կարևոր վայրի բացման ժամանակ անտեսանելի ուժերին հանգստացնելու համար, կամ բուդդիստ, երբ անհրաժեշտ է հարազատին ճիշտ ուղի ցույց տալ: Կոնֆուցիականության հիմնական գաղափարն առաջին հերթին ուղղված էր համակեցության մեջ մարդու կատարելագործմանը [12]: Այսինքն, Չինաստանում գոյություն չունի փրկիչ կրոն, առավել ևս՝ դրախտ կամ հավերժություն: Միակ հավերժությունը տարվա եղանակների անփոփոխ հաջորդականությունն է: Միևնույն ժամանակ, երկրում կան կրոնական դավանանքի արտաքին նշաններ, որոնք մոտ են արևմտյան ընկալմանը՝ տաճարներ, վանականներ, արարողություններ:

Անհատի դերը չինական քաղաքակրթությունում ստորադասվում է ընտանիքի կամ կոլեկտիվի դերին: Սա հերթական տարբերություն է արևմտյան քաղաքակրթությունից: Այս է պատճառը, որ ընդգծվում ենք չինական քաղաքակրթության գլխավոր հատկանիշը՝ հավաքական մտածելակերպը:

Չինական քաղաքակրթությանը բնորոշ է նաև աստիճանակարգությունը: Բուրգի հիմքում միշտ ընտանիքն է: Չինական հասարակության մեջ կանանց և տղամարդկանց ուղիները տարբերվել են. կոնֆուցիական բարոյականությունը նրանց անգամ ստիպում էր քայլել փողոցի տարբեր կողմերով: Չինաստանում կինը միշտ դիտարկվել է որպես կյանքի շարունակականությունը ապահովող: Միաժամանակ, հիերարխիայի մեջ յուրաքանչյուրն ունի պատասխանատվության իր մասնաբաժինը. հայրը պատասխանատու է որդու համար, հարևանը՝ հարևանի և այսպես շարունակ: Պետք է նշել, որ ընտանիքի կամ համայնքի մեկ անդամի արարքների համար պատասխանատվություն կրում են այդ խմբի բոլոր անդամները հավասարապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Энгельс Ф.**, Происхождение семьи, частной собственности и государства, с. 186, URL: <https://www.esperanto.mv.ru/Marksismo/Pschsg/pschsg-9.html#c9> (дата обращения: 25.06.2018).

[2] Сравнительное изучение цивилизаций, Москва, Аспект Пресс, 1999. с. 10.

[3] **Spengler O.**, The Decline of the West. English abridged edition prepared by Arthur Helps from the translation by Charles Francis Atkinson. New York, [1926, 1928, 1932], pp. 24-7, URL: <http://www.duke.edu/%7Eaparks/SPENG7.html> (Accessed: 24.06.2018).

[4] **Toynbee A. J.**, A Study of History, volume I-IV, London, New York, 1955, II, pp. 1, 57.

[5] **Данилевский Н. Я.**, Россия и Европа, Санкт-Петербург, Ун-та, 1995, с. 123.

- [6] **Вольтман Л., Политическая антропология**, Издание второе исправленное и дополненное, серия «Библиотека расовой мысли», перевод с немецкого. Предисловие Авдеева В. Б., Москва, Белые альвы, 2000, с. 352.
- [7] **Сорокин П. А.**, Человек. Цивилизация. Общество, Москва, 1992, с. 411.
- [8] **Бродель Ф.**, Грамматика цивилизаций, ВЕСЬ МИР, Москва 2008, Перемены в терминологии, URL: <https://sci.house/vsemirnaya-istoriya-scibook/peremenyi-terminologii-94828.html> (дата обращения: 11.05.2018).
- [9] **Леви-Стросс К.**, Раса и история, Разнообразие культур, URL: http://www.gumer.info/bibliotek_Buks/Culture/levestr/rasa.php (дата обращения: 14.06.2018).
- [10] **Huntington S.**, 'Clash of civilisations' in Foreign Affairs, Summer 1993, pp. 22-49.
- [11] **Хантингтон С.**, Столкновение цивилизаций, пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова, Москва, ООО Издательство АСТ, 2003, с. 356.
- [12] **Малявин В.**, Конфуций, Москва, 1992, с. 225.

Չիլինգարյան Անուշ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՉԻՆԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր՝ քաղաքակրթություն, արժեհամակարգ, ադապտացիա, մերիտոկրատիայի սկզբունք, քաղաքակրթությունների բախում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «քաղաքակրթություն» եզրույթի տեսամեթոդաբանական հիմքը, ընդգծել քաղաքակրթությունների դերն ու նշանակությունը համաշխարհայնացման պայմաններում, վեր հանել հին քաղաքակրթություն ունեցող երկրների առանձնահատկությունները: Նպատակին հասնելու համար անդրադարձել ենք ոլորտի լավագույն տեսաբանների կարծիքներին և վերլուծություն կատարել հնագույն քաղաքակրթության՝ Չինաստանի օրինակով: Արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ցանկացած հնագույն քաղաքակրթություն ունեցող երկիր կարող է պահպանել սեփական ավանդույթները և միաժամանակ ապրել ժամանակակից աշխարհում միայն այն դեպքում, եթե ընտրի արդիականացման ճիշտ ճանապարհ:

Чилингарян Ануш

ЦЕННОСТНАЯ СИСТЕМА И ПУТИ РАЗВИТИЯ ЦИВИЛИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ КИТАЯ)

Ключевые слова: цивилизация, система ценностей, адаптация, принцип меритократии, столкновение цивилизаций.

Цель работы - изучить методологическую основу термина «цивилизация», подчеркнуть роль и значение цивилизаций в контексте глобализации, выделить особенности стран с древними цивилизациями. Для достижения цели мы использовали мнения лучших теоретиков и проанализировали древнюю цивилизацию на примере Китая. В результате мы пришли к выводу, что любая древняя страна может сохранить свои традиции и одновременно жить в современном мире, только в случае правильного выбора способа модернизации.

Chilingaryan Anush

SYSTEM OF VALUES AND WAYS FOR THE DEVELOPMENT OF CIVILIZATION (ON THE EXAMPLE OF CHINA)

Key words: civilization, system of values, adaptation, principle of meritocracy, clash of civilizations.

The purpose of the work is to study the methodological basis of the term 'civilization', to emphasize the role and significance of civilizations in the context of globalization, to highlight the features of countries with ancient civilizations. To reach the goal, we have touched upon the opinions of the best theorists and analyzed the ancient civilization on the example of China. As a result, we have concluded that any ancient civilization can preserve its traditions and at the same time live in the modern world, if only it chooses the right way to modernize itself.